



ԳՐԻՍՏՈՂԵԱՅ ԷՐՈՆԱՊԵՏՆԵՐՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԱՅՅՈՂ

ԻՍՐԱՅԷԼԻ ՎՍԵՄ. ՆԱԽԱԳԱՀԻՆ

1967ի Արար-Իսրայէլեան պատերազմին հետեւանքով, երուսաղէմի արեւելեան բաժնին (ընդ որս եւ Հին Քաղաքին) Իսրայէլի իշխանութեան տակ իյնալէն ի վեր. սովորութիւն դարձած է որ ամէն տարեվերջի, Իսրայէլի Պետութեան Նախագահը իր ապարանքը հրաւիրէ Ս. Քաղաքիս քրիստոնէայ յարանուանութեանց պետերը, ներկայացնելու համար անոնց իր եւ պետութեան շնորհ ուրոյթի իններն ու բարեմաղթութիւնները նորածագ տարւոյն համար:

Աւանդական դարձած այս հանդիպումը այս տարի կատարուեցաւ որոշուած իր ժամանակէն մօտ ամիս մը ուշ, տրուած ըլլալով որ Յունաց Պատրիարքը չոր էր վախճանած (10 Դեկտեմբերին) եւ Յոյն Միաբանութիւնը կը գտնուէր քառասնօրեայ սուգի շրջանի մը մէջ:

Այդ հանդիպումը կատարուեցաւ Երկուշաբթի, 26 Յունուարին, Սուրբ Մինդեան Ութօրէքին: Ս. Յարութեան Տաճարի հանդիսութիւններէն վերադարձին Պատրիարքարանի մէջ կատարուած «Տնօրինէք» ի աւանդական արարողութենէն անմիջապէս ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունենալով Դերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեանը եւ հիւրաբար Ս. Աթոռ գտնուող Ռումանիոյ եւ Պուլկարիոյ Առաջնորդ Դերշ. Տ. Տիրայր Արքեպս. Մարտիրոսներ, մեկնեցաւ Նախագահական ապարանքը, ուր հասաւ ճիշդ կէսօրին: Հոն էին շատ մը համայնքապետի: Նախ խօսք ատաւ Կրթական Նախարար Զէվալուն Համըր (որ կը փոխարինէր Կրօնից Նախարարը) եւ բարի գալուտեան արտայայտութիւններէ ետք անդրադարձաւ անցնող տարւան ընթացքին Իսրայէլի կրօնական մարզի մէջ կատարուած իրագործումներուն, շեշտելով նաեւ կրօնքին անհուն ու անփոփոխ սրինքի դերը՝ մարդկութեան առջեւ բանալու երջանիկ ու բարօր կեանքի մը ճամբան: Ապա, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի դիմաց այլ կրօնապետներու, ուղերձ մը կարդաց Անգլիերէնով, որուն թարգմանութիւնն է հետեւեալը. —


Ձերդ Վսեմութիւն,

Խորապէս պատուուած կը զգամ ինկզիմն, ի դիմաց բրաւանայ համայնքներու պետերուն, օճորհակալութիւն յայտելու Ձերդ Վսեմութեան, Ձեր սիրտի բնական համարձակութեամբ, եւ պատեհութեամբ՝ եղբայրական օջախակի մէջ կայացած մեր այս հանգիպումին: Մենք զայս կը նկատենք իբրեւ հանդի աւարտումը Ս. Մանդեան եւ Նոր Տաւրոյ ուսումնական հանգիստութեանց:

Վստահ եմ թէ բարգմանը կը հանգիստանա մեր բոլորի զպայտմներուն, իբր յայտենք թէ որքա՞ն զպայտմեանք Ձերդ Վսեմութեան ներկայութիւնէն՝ Երանաւորն Տ. Պենեօբիբոս Պատրիարք յուզակաւորութեան եւ Ձեր սրտումին՝ յետագայու այս լնդունելու-

քիւնը մինչեւ անարար հայն Որոտոնս Պատիարարանի սուգի բշտանի: Մենք Ձեր այս կեցումը կը մկտնիք իբրեւ արտայայտութիւն այն հոլածու վերաբերմունքին՝ զոր Իսրայէլի Կառավարութիւնը ցոյց կու տայ Սուրբ Երկրի բրիտանայ համայններուն հանդէպ: Կը միանամք Ձերդ Վեկտորիան, ոգեկոչելով յիշատակը Սրբանկայիւսական Պենեթիքթոս Պատիարին, որ այնքան առատօրէն նպաստեց Սուրբ Քալոյմի հոգեւոր կեանքին եւ իր Եկեղեցւոյ բարօրութեան եւ անոր բարւոյ յարաբերութեանց՝ այլադաւան եւ ալակրօն համայններու հետ՝ որոնցմով կազմուած է նրուսադէմի մոզայիքը:

Կը փափախիմք շնորհակալութիւն յայտել Ձերդ Վեկտորիան, Ձեր խոհուն եւ սրբ. ազգին խօսքերուն եւ բարի գալտեան գեղեցիկ արտայայտութիւններուն համար: Մտալինս կը փոխադարձենք Ձեր բարեմալլութիւններն ու շնորհաւորութիւնները: Նաեւ կ'օգտագործենք այս առիթը, արտայայելու մեր խոր գնահատանքը Կառավարութեան եւ Քաղաքապետութեան Վարչութեան ընտնուած շարունակական օգնութեան, մեր համայնները շահագործող բոլոր հարցերու պարագային, եւ Ձեր յանձնառութեան՝ պահպանելու մեր Սրբավայրերը եւ հոն տիրող իրաւակարգը (Status Quo):



Ամին. Ս. Պատիար՝ Հայրը կ'արասանէ իր հառը: Նկարին մէջ. Սասած՝ ձախէն աջ, կ'երեւին Պետրոսեան Վեկտ. Նախագահը եւ Կրթական Նախարարը:

Մտալինս կ'աղօթենք եւ կը մաղթենք որ «խաղաղութեան իշխան» քառասնորդէ մեր քայլերը, իրադրոճելու տեսական խաղաղութիւնը եւ արդարութիւնը այս երկրամասի բոլոր ժողովուրդներուն համար:

«Երանի խաղաղարարաց, զի նոքա որպիսի Աստուծոյ կոչեսցին» . ամեն:

Պատշաճ հիւրասիրութիւնէ ետք, Նախագահ Իգնատ Նափոն անդրադարձաւ վերջերս կատարած նգիպտոսի իր այցելութեան եւ մաղթեց որ 1981ի ընթացքին արձանագրենք նորանոր քայլեր այն ճանապարհին վրայ՝ որ կ'առաջնորդէ ճշմարիտ խաղաղութեան, եւ որուն կարիքը կը զգան մասնաւորաբար ժողովուրդները Միջին Արեւելքի: Մօտ ժամ մը տեւող տեսակցութեան աւարտին, ներկաները հրաժեշտ առին Նորին Վեմութիւնէն եւ լաւագոյն տպաւորութիւններով վերադարձան իրենց տեղերը:

ԱՄԱՆՈՐԻ ՀԱՆԴԵՍ ԺԱՌԱՆԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ուրիշ տարիներու նման այս տարի եւս, 13 Յունուար, Հին Տոմարով Կաղանդի նախօրեակին, կատարուեցաւ Ամանորի Հանդէսը ժառանգ. վարժարանի եւ Ընծայարանի: Երեկոյեան ժամը 7ին, Ալեքս եւ Մարի Մանուկեան վարժարանի ընդարձակ ու շքեղագարդ սրահն էին արդէն աշակերտութիւն եւ ուսուցչական կազմ, ինչպէս նաեւ Ս. Աթոռի պաշտօնեաներ:

Քառորդ ժամ անց, սրահ մուտք գործեց Միաբանութիւնը, գլխաւորութեամբ վարժարանի վերատեսուի Գերշ. Տ. Շահէ Արքեպս-ի, որ կը փոխարինէր Ամին. Ս. Պատրիարք Հայրը, որ ստիպողական գործերու բերումով չէր կրցած վերադառնալ Ամանէն: Ուսանողութիւնը վարժարանի քայլերգը՝ «Սիրտ ի սիրտ» հնչեցուց Միաբանութեան սրահ մուտքի պահուն, որմէ ետք վերատեսուի Սրբազանը ըրաւ բացման հակիրճ բայց իմաստալից խօսք մը, ծանրանալով ժամանակի ճշգրիտ իմացումին եւ արժեւորման վրայ: Ապա ժառ. սաներ, ղեկավարութեամբ Երաժշտութեան ուսուցչի Պր. Վահէ Գալայեանի, երգեցին Կարօ Զաքարեանէ դաշնաւորուած «Հանդէս է Տօնական» երգը, այնքան պատշաճ օրուան եւ պահին: Մուրաւ Տէմիրեան կարգաց Ուիլեմ Սարոյեանի «Հայն ու Հայը», որմէ ետք Սարկաւազ-Ուրարակիրներ բացառիկ յաջողութեամբ բնամղորդեցին «Շատախօս Սփորիչը» գաւելտախաղը, որ քրքիջ ու խնդուք խլեց ներկաներէն: Դերուսոյն էր Պր. Ալեքս Գալայեան: Վալէ Թապաքեան նուազեց դասական երաժշտութեան կտոր մը, ու ապա ժառ. սաներ խմբերգեցին Ալ. Յարութիւնեանէ դաշնաւորուած «Պարուն հացուեց»: Պատրիարք Սրբազանի «Հայրենականք» քերթողաշարքէն հատուածներ արտասանեցին ժառանգաւորներ: Ժնասացողներն էին Խայիկ Սրկ. Գարայեան եւ Տրց. Եղիա Զալլըրեան: Ասով փակուեցաւ առաջին մասը կամ գեղարուեստական բաժինը Յայտագրին:

10 վայրկեանի դադարէ մը ետք սկսաւ երկրորդ մասը հանդէսին, սրահ ժամանումովը Կաղանդ Պապուկին: Ընդհանուրի հետաքրքիր նախածքին եւ խանդալից ծափերու ընդմէջէն ան ուղղուեցաւ կեդրոնը սրահին, շնորհաւորական պատշաճ խօսքերէ ետք բաժնելու համար նախ իր բանաւոր եւ ապա նիւթական կաղանդէքները: Կատարուեցան նաեւ վիճակահանումներ: Փակման խօսքը արտասանեց Խուսանիտայ եւ Պուլկարիտայ Հայրց Առաջնորդ Գերշ. Տ. Տիրայր Արքեպս., որ վերյուշը ըրաւ Յճ տարիներն առաջ իրր ուսանող այս յարկին տակ իր անցուցած քաղցր օրերուն: Յորդորեց ուսանողութիւնը արժանաւորապէս պատրաստուիլ, ըլլալու համար ապագայ ժառանգորդներն ու արթուն պահակները այս Սրբազան Տան:

Միաբան երգուած «Տէր, Կեցո՛ւ մալթերգով եւ վերատեսուի Սրբազան Հօր «Պահպանիչով» վերջ գտաւ երկու ժամեր տեւող հանելի այս հանդիսութիւնը:

(Աւելորդ չ'ըլլար այստեղ յիշել թէ քրիստոնեայ համայնքներու անունով եղած նմանօրինակ ելոյթներ իրաւունքն են Յունաց Պատրիարքին, տրուած ըլլալով որ Սուրբ Տեղեաց գոյալիճակի համաձայն, Յոյն-Օրթոտոքս համայնքը առաջին դիրքը կը գրաւէ այլ համայնքներու կարգին: Այս տարի, Յոյներ նոր Պատրիարք ընտրած չ'ըլլալով(*), այդ վիճակուեցաւ Հայոց Պատրիարքին):

(*) Սիւնի տպագրութիւնը մօտ էր իր լրումին, երբ տեղեկացանք թէ Յունաց Միաբանութիւնը ընտրած է իր Պատրիարքը, յանձինս Ամանի Առաջնորդ Գերշ. Տ. Թէոդորոս Աբգեպուկոսի: Պիտի անգլադառնանք այս մասին Ամսագրին յաջորդ թիւով: